



**ԸՆԴՈՒՆԵՔ ՍՊԱՌՆԱԼԻ ՏԵՍՔ.
ՍԱՐՄԱՓԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
(Տասներորդ ռազմավարություն)**

Ուրիշի ագրեսիվությունը հաղթահարելու լավագույն միջոցը ձեր վրա հարձակվել թույլ չտալն է: Դրան հասնելու համար անհրաժեշտ է տպավորություն ստեղծել, որ դուք ավելի ուժեղ և հզոր եք, քան իրականում կաք: Զարգացրեք ձեր հեղինակությունը, օրինակ՝ տարածելով լուրեր, որ դուք անկայուն եք, դյուրագրգիռ և ավելի լավ է խուսափել ձեզանից: Այս դեպքում, նույնիսկ եթե պարտվեք, դուք ձեր հետևից հակառակորդին էլ կքաշեք: Ստեղծեք համապատասխան հեղինակություն և մի քանի տպավորիչ գործողություններով հավաստիություն հաղորդեք դրան: Եթե ձեր մրցակիցները լիարժեք վստահություն չունեն այն հարցում, թե ինչի կարող է հանգեցնել ձեր հետ հակամարտությունը, նրանք չեն ցանկանա պարզել դա: Խաղացեք բնական վախերի և անհանգստությունների վրա, որպեսզի մարդիկ տատանվեն:

ՀԱՆՐԱՊԱԿԱՑ ՍԱՐՍԱՓԵՑՈՒՄ

Կյանքում մենք անխուսափելիորեն հանդիպում ենք մեզանից ավելի ագրեսիվ մարդկանց՝ նենգ ու անողորմ, պատրաստ իրենց նպատակներին հասնելու համար օգտագործել ցանկացած միջոց: Նրանց վրա գլխապտույտ հարձակվելը, մեղմ ասած, անխոհեմ կլինի. նրանք սովորաբար փորձառու մարտիկներ են և փորձառու մարտերում, սովորաբար անբարեխիղճ և բարոյական կողմնակալությունից զուրկ: Դուք գրեթե անպայման կպարտվեք: Հույս ունենալ, որ նրանք կհեռանան պահանջվող ավարի մի մասը ստանալուց հետո կամ այլ կերպ շոյելով իրենց ես-ը, նույնպես անօգուտ է: Մասնակի զիջումներ անելը միայն կբացահայտի ձեր սեփական թուլությունը՝ հրահրելով հետագա սպառնալիքներ և հարձակումներ: Բայց ամենավատը լիակատար հանձնվելն է, կապիտուլյացիան առանց պայքարի. նրանք ստանում են այն հեշտ ավարը, որի մասին երազել են, իսկ դուք մնում եք դառնությամբ և վրեժխնդրության ծարավով: Ավելին, դժվարին իրավիճակներում նվազագույն դիմադրության ուղին ընտրելը կարող է վատ սովորություն դառնալ:

Փոխանակ փորձելու խուսափել հակամարտությունից կամ նվնվալ, ողբալով, թե որքան անարդար է այս ամենը, եկեք դիմենք մեծ ռազմական առաջնորդների և ստրատեգների փորձին, ովքեր հազարամյակներ շարունակ բազմիցս բախվել են դաժան թշնամիների և զավթիչ հարևանների հետ, այինքն հանդիպակաց սարսափի փորձին: Զսպման այս արվեստը հիմնված է պատերազմի և մարդկային բնույթի վերաբերյալ երեք հիմնարար ճշմարտությունների վրա:

Առաջինը, թշնամիներն ավելի հակված են հարձակվելու անպաշտպան և թույլ զոհի վրա:

Երկրորդ, ոչ ոք հաստատ չգիտի՝ թույլ եք դուք, թե ոչ: Թշնամին հույսը դնում է ձեր թողած տպավորության, ձեր ներկա և անցյալ վարքագծի վրա:

Երրորդ, ձեր հակառակորդները հետապնդում են հեշտ որս, արագ և անարյուն հաղթանակներ: Ահա թե ինչու են նրանք հարձակվում թույլերի և անպաշտպանների վրա:

Սարսափեցումը թույլ է տալիս իրավիճակը ծավալել նրանց դեմ՝ փոխելով ձեր թողած տպավորությունը: Ձեր՝ որպես միամիտ և թույլ մարդու մասին պատկերացումը պետք է փոխվի՝ հստակեցնելով, որ առաջիկա մարտը խոստանում է այնքան էլ հեշտ չլինել, որքան նրանք հույս ունեին: Սովորաբար դա իրականացվում է որոշ ցուցադրական գործողությունների և վարքագծերի միջոցով, որոնց նպատակն է շփոթեցնել ագրեսորներին, թյուրիմացություն առաջացնել, նրանց մտածել տալ, որ նրանք թերագնահատել են ձեզ: Դուք կարող եք իսկապես թույլ և խոցելի լինել, բայց նրանք կկասկածեն դրանում: Դուք քողարկում եք ձեր թուլությունը և շփոթեցնում նրանց: Գործողությունները շատ ավելի համոզիչ են, քան նույնիսկ ամենակրքոտ խոսքերն ու սպառնալիքները: Օրինակ՝ հակահարված տալով, նույնիսկ թեթև և խորհրդանշական կերպով, դուք ցույց եք տալիս, որ կատակելու տրամադրություն չունեք: Հարձակվողը, որը, ըստ էության, բոլոր կողմերից շրջապատված է անապահով, մարտունչել չցանկացող մարդկանցով, հավանաբար կխուսափի ռիսկի դիմելուց, կհեռանա և կփնտրի մեկ այլ թիրախ:

Պաշտպանական պատերազմի այս ձևը չափազանց օգտակար է և կարող է լայնորեն կիրառվել առօրյա կյանքում: Ագրեսորին հանգստացնելու փորձը հեշտ գործ չէ. այն հաճախ պահանջում է նույնքան էներգիա, որքան մարտն ինքնին: Վախեցնելով բռնարարին, նրան հետ պահելով ձեզ վրա հարձակվելուց կամ ձեր ճանա-

պարհին կանգնելուց՝ դուք կխնայեք մեծ քանակությամբ էներգիա, նյարդեր և ժամանակ: Ագրեսորներին հետ պահելու համար դուք պետք է տիրապետեք խորամանկության արվեստին, սովորեք մանիպուլացնել, ստեղծել խաբուսիկ տպավորություն, ազդել այն բանին, թե ինչպես են նրանք ընկալում ձեզ, արժեքավոր հմտություններին, որոնք հետագայում կարող են կիրառվել առօրյա կյանքի բոլոր կոնֆլիկտային իրավիճակներում: Վերջապես, ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները գործնականում կիրառելով՝ դուք կստեղծեք ամուր ընկույզի համբավ, մեկի, ով կարող է պաշտպանել իրեն, ում մարդիկ կհարգեն և նույնիսկ մի փոքր կվախենան: Նրանք, ովքեր, թաքցնելով իրենց ագրեսիան և չար կամքը, խոչընդոտներ են ստեղծում ձեզ համար, ովքեր գաղտնի կերպով պատրաստվում են խաթարել ձեր անդորրը, թող մտածեն այն մասին, թե արդյոք խաղն արժե շարունակել:

Ստորև բերված են զսպման և հակահարվածի հինգ հիմնական մեթոդներ: Դուք կարող եք դրանք կիրառել հարձակողական գործողություններում, բայց դրանք հատկապես արդյունավետ են պաշտպանության մեջ, այն պահերին, երբ դուք ձեզ խոցելի եք զգում և գիտեք, որ ձեզ սպառնում է հարձակումը: Այս բոլոր մեթոդներն ու հնարքները քաղված են այս արվեստի մեծագույն վարպետների փորձից:

Հանկարծակի մանևրով անակնկալի բեր թշնամուն: Ձեր թուլությունը թաքցնելու և թշնամուն մոլորեցնելու լավագույն միջոցը՝ ստիպել նրան հետաձգել հարձակումը, անսպասելի, վճռական, նույնիսկ ռիսկային գործողություններ ձեռնարկելով: Գուցե հակառակորդը հավատում է, որ դուք նրա համար հեշտ որս եք: Հետո, եթե անսպասելիորեն ցույց տաք ձեր ճանկերը, ցուցաբերեք անվախություն և վստահություն, դա նրանց կշփոթեցնի՝ ստիպելով հետաձգել հարձակումը: Առաջին հերթին, նրանք կմտածեն, որ ձեր գործողությունները ինչ - որ բանով ապահովված են, և որ դուք իրական աջակցություն ունեք: Նրանց մտքով չի անցնի, որ ինչ-որ մեկը կարող է այնքան անխուս՝ լինել, որ համարձակ գործողություններ կկատարի միայն հանուն էֆեկտի: Երկրորդ, նրանք կսկսեն տեսնել ձեր մեջ այնպիսի ուժեղ կողմեր և մտավախությունների պատճառներ, որոնք նախկինում չէին պատկերացնում:

Վերադարձրու սպառնալիքը: Եթե թշնամին ընդհանրապես չի գնահատում ձեզ՝ մտածելով, որ կարող է քեզ ամեն կերպ հրել ու հետապնդել, դերերով փոխվիր նրա հետ: Դա անելու համար հարկավոր է կատարել անսպասելի քայլ, թեկուզ աննշան, որը նախատեսված է նրանց վախեցնելու համար: Սպառնալիքը մի բան է, որը նրանք հաշվի են առնելու և լուրջ են վերաբերվելու: Հարված եք այն վայրին, որը ձեզ խոցելի է թվում և թույլ տվեք, որ ձեր հարվածը ցավոտ լինի: Եթե դա նրանց կզայրացնի և կստիպի շտապել ձեզ վրա, մի պահ հետ կանգնեք, իսկ հետո նորից հարվածեք, երբ նրանք ամենաքիչն են սպասում դրան: Ցույց տվեք, որ դուք չեք վախենում նրանցից և որ ունեք կոպտություն ու անողորմություն, որը նրանք չեն նկատել ձեր մեջ: Պետք չէ շատ հեռու գնալ: Բավական է թեթևակի հարվածել ցավոտ կետին: Ուղարկեք սպառնալից նամակ՝ ամրապնդելով նրանց համոզմունքը, որ դուք ավելին էք ընդունակ:

Անկանխատեսելի և անկանխագուշակելի տեսք ունեք: Այս դեպքում դուք վարվում եք այնպես, կարծես զգում եք, որ կորցնելու ոչինչ չունեք: Դուք կամիկաձե եք, պատրաստ եք զոհաբերել ինքներդ ձեզ՝ ձեր հակառակորդին անդունդ գլորելու համար, լրջորեն վտանգելով նրա հեղինակությունը: (Այս մարտավարությունը հատկապես արդյունավետ է այն մարդկանց հետ, ովքեր կորցնելու բան ունեն՝ անքիժ հեղինակություն ունեցող ազդեցիկ մարդիկ են:) Ձեզ դժվար է հաղթել, և դա կարող է հակառակ ազդեցություն ունենալ ձեր հակառակորդների վրա: Ձեր վարքային

բնութագրերը ձեզ հետ մենամարտելու հեռանկարը դարձնում են չափազանց անհետաքրքիր: Դուք չեք «խաղարկում ձեր զգացմունքները» կամ չեք ձևացնում, թե հիստերիա եք դրսևորում, դա թուլության նշան կլինի: Դուք պարզապես հստակեցնում եք, որ մի փոքր անկայուն եք մտել, որ ձեր գործողությունները անկանխատեսելի են, և որ հաջորդ պահին կարող եք ամեն ինչի գնալ: Խենթ հակառակորդը աներևակայելիորեն վախեցնող է: Ոչ ոք չի ուզում մենամարտել անկանխատեսելի մեկի հետ, հատկապես, երբ նա կորցնելու ոչինչ չունի:

Խաղացեք նրանց բնական կասկածամտության վրա: Ձեր հակառակորդներին բացահայտորեն սպառնալու փոխարեն փորձեք ավելի նուրբ մոտեցում՝ նրանց մոլորեցնելու և երկու անգամ մտածելու հնարավորություն տալ: Օրինակ՝ կարող եք միջնորդի միջոցով հաղորդագրություն փոխանցել՝ պատմելով նրանց ձեր մասին պատմություն, թե ինչպիսին եք և ինչի եք ընդունակ: Կամ գուցե «պատահաբար» թույլ տաք նրանց լրտեսել ձեզ՝ պարզապես թույլատրելով բացահայտել ինչ-որ բան, որը կխանգարի նրանց: Թող ձեր հակառակորդները մտածեն, որ նրանք կռահել են ձեր գաղտնի ծրագրերը իրենց դեմ, որոնք դուք ձևացնում եք, թե թաքցնում եք: Ուղղակի սպառնալիքը կստիպի ձեզ ձեր խոսքերը հաստատել գործողություններով, բայց նրանց կասկածել, որ դուք անտեսանելի բան եք ծրագրում, իսկ դա բոլորովին այլ հարց է: Որքան ավելի քողարկված և անհասկանալի է ձեր սպառնալիքը, այնքան ավելի կբացվի նրանց երևակայությունը, և այնքան ավելի վտանգավոր թշնամի կլավաք դուք նրանց համար:

Ձևավորեք սարսափելի հեղինակություն: Այս հեղինակությունը կարելի է ձեռք բերել տարբեր ձևերով՝ լինելով անհամագործունակ, դժվար շփվող, համառ, կոշտ և անողոք ձեր նպատակներին հասնելու հարցում: Տարիների ընթացքում նման կերպար ձևավորեք, և մարդիկ կխուսափեն ձեզանից՝ փորձելով հեռու մնալ: Ո՞վ է ուզում վիճել կամ վիճվել մեկի հետ, ում, բոլորը գիտեն, անգիջում է և կպայքարի մինչև վերջ: Խելացի և հնարամիտ, բայց անողոք: Նման կերպար ձևավորելու համար դուք ստիպված կլինեք անընդհատ տհաճի դեր խաղալ, բայց վերջնական արդյունքը այնքան վախեցնող կլինի, որ հազիվ թե որևէ մեկը համարձակվի սպառնալ ձեզ: Եվ ի՞նչ անել, եթե դա պարզապես պաշտպանություն է: Ձեր կերպարը մարդկանց մեջ վախ կներշնչի մինչև ձեզ հետ հանդիպելը: Անկախ դրանից, ձեր հեղինակությունը կառուցելը պահանջում է մանրակրկիտ ուշադրություն մանրամասներին, խուսափել անհամապատասխանություններից: Ցանկացած անհամապատասխանություն կարող է մահացու լինել:

ՕՐԻՆԱԿՆԵՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԻՑ

1. 1862 թվականի մարտին, Ամերիկայում քաղաքացիական պատերազմի սկսվելուց մեկ տարի անց, կոնֆեդերատների ուժերի վիճակը ծանր էր թվում: Նրանք պարտությունը պարտության ետևից էին կրում ամենակարևոր ճակատամարտերում, նրանց զենեքալները ընդհանուր հայտարարի չէին գալիս և անընդհատ վիճում էին, մարտական ոգին բոլոր ժամանակների համեմատ ամենացածր մակարդակին էր, և զորքերի հավաքագրումը դժվարին խնդիր էր դարձել: Ձգալով, որ հարավցիները դժվարության մեջ են, զենեքալ-մայոր Ջորջ Մակ-Քլեյանի գլխավորությամբ Դաշնային լիգայի մեծ բանակը ուղղվեց դեպի Վիրջինիայի ափ՝ մտադիր լինելով այնտեղից առաջխաղացում կատարել դեպի արևմուտք՝ դեպի Հարավի մայրաքաղաք Ռիչմոնդ: Կոնֆեդերատների ուժերը բավարար զորքեր ունեին Մակ-Քլեյանի

բանակին մեկ-երկու ամիս դիմադրելու համար, սակայն հարավայինների լրտեսները հաղորդեցին, որ Վաշինգտոնի մոտ տեղակայված Դաշնային լիզայի զորքերը նույնպես պատրաստվում են շարժվել դեպի Ռիչմոնդ:

Եթե նրանք միանան Մակ-Քլեյլանի բանակին, իսկ դա նրանք խոստացել էին հենց Լինքոլնին, Ռիչմոնդը դատապարտված էր: Եթե Ռիչմոնդը ընկներ, ապա հարավին ոչինչ չէր մնա, քան ընդունել սեփական պարտությունը:

Կոնֆեդերատների «Քարե պատ» մականունով գեներալ Թոմաս Ջոնաթան Ջեքսոնը գտնվում էր Շենանդոա հովտում՝ 3600 մարդուց բաղկացած բանակով, որոնք ոչ թե ռազմական ստորաբաժանումներ էին, այլ ապստամբների խումբ, որոնց նա կարողացել էր շտապ հավաքագրել և մարզել: Նրա խնդիրն էր պաշտպանել բերքաբեր հովիտը Դաշնային լիզայի բանակի ներխուժումից: Սակայն, Ռիչմոնդի վրա արշավանքի նախապատրաստությունների մասին իմանալով՝ Ջեքսոնը նկատեց շատ ավելի կարևոր մի բանի հնարավորություն: Ջեքսոնը Մակ-Քլեյլանի համակուրսեցին էր և լավ էր ճանաչում նրան: Նրա համար ակնհայտ էր, որ անբռնազբոսիկության և վստահ արտաքինի հետևում թաքնված էր բավականին ամաչկոտ մարդ, որը չափազանց մտահոգված էր իր կարիերայում առաջխաղացմամբ և սխալներից խուսափելով: Մակ-Քլեյլանն ուներ 90.000 մարդ, որոնք պատրաստ էին արշավելու դեպի Ռիչմոնդ, գրեթե կրկնակի ավելի շատ էին քան ամբողջ Կոնֆեդերացիայի ուժերը, բայց Ջեքսոնը գիտեր, որ նա զգուշություն կցուցաբերի և չի մասնակցի մարտի, մինչև վստահ չլինի իր ճնշող գերազանցությանը: Նա միայնակ չէր արշավի դեպի Ռիչմոնդ, այլ կսպասեր Լինքոլնի խոստացած համալրմանը: Լինքոլնը, սակայն, չէր կարող նրան զգալի ուժեր տրամադրել, եթե կասկածեր, որ վտանգը թաքնված է այլուր:

Շենանդոա հովիտը գտնվում էր Վաշինգտոնից հարավ-արևմուտք: Եթե Ջեքսոնը կարողանար կեղծ տպավորություն ստեղծել այնտեղ կատարվողի մասին, նա կարող էր խափանել հյուսիսայինների ծրագրերը և փրկել Հարավը անխուսափելի թվացող փլուզումից:

Մարտի 22-ին Ջեքսոնի հետախուզությունը հայտնեց, որ հովտում տեղակայված Դաշնային ուժերի երկու երրորդը՝ գեներալ Նաթանիել Բենքսի գլխավորությամբ, շարժվում էր դեպի արևելք՝ հստակ մտադրվելով միանալ Մակ-Քլեյլանի հետ: Շուտով Վաշինգտոնի մոտ տեղակայված բանակը՝ գեներալ Իրվին ՄաԿ-Դաուելի հրամանատարությամբ, նույնպես շարժվեց դեպի Ռիչմոնդ: Ջեքսոնը ժամանակ չկորցրեց: Նա արագորեն վերատեղաբաշխեց իր իր ուժերը դեպի հյուսիս՝ Քերնսթաունի ուղղությամբ և կարողացավ սկզբում կանգնեցնել, իսկ այնուհետև հարձակվել Դաշնային զորքերի վրա, նախքան նրանք դուրս կգային հովտից: Մարտերը կատաղի էին, և երեկոյան Ջեքսոնի զինվորները ստիպված էին նահանջել: Հարավցիները, կարծես, աղետի էին ենթարկվել, այնքան ջախջախիչ էր նրանց պարտությունը: Նրանք հսկայական կորուստներ էին կրել, և ինչպե՞ս կարող էր այլ կերպ լինել, հաշվի առնելով, որ հակառակորդի թվաքանակը գրեթե կրկնակի գերազանցում էր իրենց թվաքանակը: Այնուամենայնիվ, Ջեքսոնը, ում միշտ դժվար էր հասկանալ, բավարարված տեսք ուներ:

Մի քանի օր անց Ջեքսոնը վերջապես ստացավ երկար սպասված լուրը: Լինքոլնը հրամայեց Բենքսին հետ դառնալ դեպի հովիտ, մինչդեռ Մակ-Դաուելի բանակը մնաց այնտեղ, որտեղ գտնվում էր: Քերնսթաունի ճակատամարտը զրավել էր Լինքոլնի ուշադրությունը և նյարդայնացրել նրան՝ ոչ չափազանց, բայց բավականաչափ, որպեսզի արդարացներ այս որոշումը: Լինքոլնը չէր կարող իմանալ

Ջեքսոնի մտադրությունների կամ իր բանակի քանակի մասին, բայց նա ստիպված էր ամեն գնով նրան ենթարկեցնել Շենանդոյում: Միայն այդ դեպքում նա կարողացավ հիշել Մակ-Դաուելին և Բենքսին: Մակ-Քլեյանը ստիպված էր ընդունել այս փաստարկները, և չնայած նա բավարար ուժեր ուներ Ռիչմոնդի վրա արշավելու, այնուամենայնիվ որոշեց սպասել համալրմանը՝ հարձակման հաջողությունն ապահովելու համար:

Քերնսթաունից հետո Ջեքսոնը նահանջեց հարավ՝ հեռու Բենքսից, և երկար ժամանակ աննկատ մնաց՝ կյանքի որևէ նշան ցույց չտալով: Մայիսի սկզբին Լինքոլնը, որոշելով, որ Շենանդոա հովիտը այլևս սպառնալիք չէ, Մակ-Դաուելին ուղարկեց Ռիչմոնդ: Բենքսը մտադիր էր միանալ նրան: Ջեքսոնը կրկին զգոն էր: Նրա բանակը կատարեց լիովին անկանխատեսելի մանևր՝ սկզբում շարժվելով արևելք՝ դեպի Մակ-Դաուել, ապա կրկին արևմուտք՝ դեպի հովիտ: Նույնիսկ իր զինվորները վստահ չէին, թե ինչ էր նա պլանավորել: Այս տարօրինակ տարաշարժերից շփոթված՝ Լինքոլնը ենթադրեց՝ առանց որևէ վստահության, որ Ջեքսոնը մտադիր է բախվել Մակ-Դաուելի հետ: Նա կրկին ընդհատեց Մակ-Դաուելի հարավային առաջխաղացումը՝ թողնելով Բենքսի բանակի կեսը հովտում: Մյուս կեսին նա ուղարկեց Մակ-Դաուելին՝ օգնության:

Հանկարծակի, Դաշնային լիգայի բոլոր ծրագրերը, որոնք թվում էր, թե լավ մտածված էին մինչև վերջին մանրուքը, վտանգվեց: Ջորջերը չափազանց ցրված էին միմյանց աջակցելու համար: Այժմ Ջեքսոնը ազատորեն կարող էր դուրս գալ որսի: Նա միանալով մոտակայքում գտնվող այլ կոնֆեդերատիվ ուժերին, մայիսի 24-ին առաջ շարժվեց հակառակորդի ուղղությամբ, որոնք գտնվում էին ցրված վիճակում: Գեներալը կատարեց փայլուն կողային մանևր և ստիպեց հակառակորդին կտրուկ նահանջել դեպի հյուսիս՝ դեպի Պոտոմակ գետը: Հետապնդելով նահանջող բանակին՝ նա խուճապ առաջացրեց Վաշինգտոնում: Ջեքսոնը հանկարծակի դարձավ սարսափելի, և նրա բանակը, որը, կարծես, հրաշքով կրկնապատկվել էր մեկ գիշերվա ընթացքում, ուղիղ շարժվում էր դեպի մայրաքաղաք:

Ռազմական քարտուղար Էդվին Ստենտոնը հեռագիր ուղարկեց Հյուսիսային նահանգների նահանգապետներին՝ տեղեկացնելով նրանց վտանգի մասին և կոչ անելով զորքերն ուղարկել մայրաքաղաքը պաշտպանելու համար: Հարավցիների առաջխաղացումը կանխելու նպատակով նախատեսված ուժերը արագ ժամանեցին: Մինչդեռ Լինքոլնը վճռականորեն տրամադրված էր Ջեքսոնին վերջնականապես ոչնչացնելու համար, Մակ-Դաուելի բանակի կեսին հետ կանչեց արևմուտք՝ վերջապես հաղթելու խնդրահարույց Կոնֆեդերացիային, և հրամայեց մյուս կեսին շարժվել դեպի Վաշինգտոն՝ մայրաքաղաքը վտանգից պաշտպանելու համար: Մակ-Քլեյանը այլընտրանք չուներ, քան համաձայնվել այս որոշման հետ: Ջեքսոնը կրկին նահանջեց, բայց այս անգամ նրա ծրագիրը լիովին հաջողվեց: Երեք ամսվա ընթացքում, իր տրամադրության տակ ունենալով ընդամենը 3600 զինվոր, նա լիովին հյուծեց 60,000-անոց հյուսիսայինների բանակը և հնարավորություն ստեղծեց հարավայիններին ժամանակ շահել Ռիչմոնդի պաշտպանությունը կազմակերպելու ու պատերազմի ընթացքը փոխելու համար:

Մեկնաբանում

Շենանդոա հովտում «Քարե պատ» Ջեքսոնի պատմությունը ցույց է տալիս մի պարզ ճշմարտություն: Պատերազմում, ինչպես առօրյա կյանքում, կարևորը չէ, թե քանի զինվոր ունեք ձեր հրամանատարության տակ կամ որքան լավ եք մատա-

կարարված, այլ այն, թե ինչպես է ձեր հակառակորդը ընկալում ձեզ: Եթե նրանք ձեզ ընկալում են որպես թույլ և խոցելի, նրանք կգործեն ագրեսիվ և վճռականորեն, ինչը կարող է հանգեցնել խնդիրների: Եթե նրանք սկսեն հավատալ, որ դուք ուժեղ եք կամ անկանխատեսելի, կամ որ ունեք թաքնված ռեսուրսներ, նրանք կհեռանան և կհետաձգեն իրենց հարձակումը: Կստիպեն նրանց փոխել իրենց ծրագրերը և ավելի զգույշ լինել: Դա կարող է փոխել արշավի ընթացքը: Ցանկացած մարտում ինչ-որ բան անխուսափելիորեն դուրս է գալիս վերահսկողությունից. դուք կարող եք չկարողանալ կառավարել մեծ ուժեր կամ պաշտպանել ձեր բոլոր թույլ կետերը, բայց միշտ կարող եք ազդել այն բանի վրա, թե ինչպես են ուրիշները ընկալում ձեզ:

Ջեքսոնը փոխեց Դաշնային լիգայի պատկերացումները իր մասին՝ նախ՝ Քերնսթաունի վրա վճռական հարձակմամբ, ինչը Լինքոլնին և Մակ-Քլեյլանին ստիպեց ենթադրել, որ նա ավելի շատ գորք ունի, քան իրականում կա: Նրանց մտքով անգամ չէր անցնում, որ ինչ-որ մեկը կարող է այնքան անխռիմ լինել, որ հարձակվի Դաշնային բանակի վրա, որը բաղկացած էր երեքուկես հազար վատ մարզված զինվորներից: Քանի որ Ջեքսոնն ավելի ուժեղ էր, քան նրանք նախկինում կարծում էին, անհրաժեշտ էր ամրապնդել նրանց դիրքերը Շենանդոա հովտում: Այս որոշումը հետաձգեց Ռիչմոնդի վրա հարձակումը, որն այժմ տղամարդկանց պակաս ուներ: Այնուհետև Ջեքսոնը սկսեց ցուցաբերել անկանոն և անկանխատեսելի վարքագիծ՝ ստեղծելով տպավորություն, որ նա ոչ միայն շատ ավելի մեծ բանակ ուներ, այլև իրականացնում էր ինչ-որ խորհրդավոր, տարօրինակ և վախեցնող ծրագիր: Ջգալով անգործություն՝ նրանք չէին կարողանում հասկանալ այս ծրագիրը՝ Լինքոլնն ու Մակ-Քլեյլանը դադարեցրին իրենց գործողությունները և ստիպված եղան ցրել իրենց ուժերը՝ փորձելով կանխատեսել հնարավոր վտանգները: Վերջապես, Ջեքսոնը կրկին հարձակվեց: Նա բավարար մարդիկ չունեի Վաշինգտոնի համար իրական սպառնալիք ներկայացնելու համար, սակայն Լինքոլնը դա հաստատ չէր կարող իմանալ: Ջեքսոնին հաջողվեց լրջորեն վախեցնել իր հակառակորդներին բանակով, որը, ըստ էության, ծիծաղելի էր:

Դուք պետք է սովորեք ազդել ուրիշների ընկալման վրա՝ ստեղծելով արտաքին տպավորություն, մարդկանց շփոթեցնելով և ստիպելով նրանց սխալներ թույլ տալ ու սխալ եզրակացություններ անել: Հետևեք Ջեքսոնին: Ձեր հակառակորդին շփոթեցնելու լավագույն միջոցը անկանխատեսելի և ոչ ավանդական լինելն է, ինչպես նաև վտանգավոր կամ անբարենպաստ պահերին վճռականորեն գործելը: Մա կշեղի ուրիշների ուշադրությունը, կխանգարի նրանց նկատել ձեր զրահի ճեղքերը և, հնարավոր է, շատ ավելի կվախեցնի նրանց, քան եթե նրանք դեմ առ դեմ բախվեին: Ավելին, եթե փորձեք ձեր վարքագիծը դժվար բացատրելի դարձնել, դուք ավելի հզոր կլավաք, քանի որ բացատրությանը չենթարկվող գործողությունները գրավում են ուշադրությունը, մարդկանց նյարդայնացնում և նույնիսկ վախեցնում: Այս կերպ դուք կարող եք անհանգստացնել ձեր հակառակորդներին և անընդհատ զգոն պահել նրանց: Պահեք նրանց հեռավորության վրա, այդ դեպքում նրանք չեն կարողանա որոշել, թե իրականում ինչ է կատարվում, որոնք են ձեր նպատակները կամ ինչ ուժեր ունեք ձեր տրամադրության տակ: Ագրեսորները կհեռանան: Ակնհայտ և, ըստ էության, խաբուսիկ տպավորությունը, որ ավելի լավ է չխառնվել ձեզ հետ, կդառնա իրականություն:

2. Անգլիայի թագավոր Էդուարդ I-ը (13-րդ դար) ուժեղ և անվախ զինվոր-թագավոր էր, ով վճռականորեն տրամադրված էր նվաճել Բրիտանական կղզիները: Նա սկզբում նվաճեց Ուելսը, ապա ուշադրությունը սևեռեց Շոտլանդիայի վրա՝ պաշարելով քաղաքներն ու ամրոցները և ավերելով այն բնակավայրերը, որոնց բնակիչները համարձակվում էին դիմադրել նրան: Նա ավելի դաժան էր շոտլանդացիների նկատմամբ, ովքեր ակտիվորեն պայքարում էին իրենց հայրենիքի անկախության համար, ինչպիսին էր սըր Ուիլյամ Ուոլսար: Էդուարդ I-ը կազմակերպում էր իսկական որս նրանց նկատմամբ, ապա ենթարկում էր նրանց հրապարակային տանջանքների և մահապատժի:

Միայն մեկ շոտլանդացի լորդ կարողացավ խուսափել դաժան միապետի վրեժխնդրությունից, դա Քարիկի կոմս Ռոբերտ Բրյուսն (1274–1329) էր, ով ինչ-որ կերպ խուսափեց Էդուարդից և թաքնվեց հյուսիսային Շոտլանդիայում՝ ինչ-որ տեղ: Ի պատասխան՝ Էդուարդը հրամայեց գերել ապստամբի հարազատներին և ընկերներին, սպանել տղամարդկանց և բանտարկել կանանց: Սակայն նույնիսկ դա չստիպեց Բրյուսին ենթարկվել անգլիական թագին: 1306 թվականին նա հռչակվեց Շոտլանդիայի թագավոր ու ամեն գնով վրեժ լուծեց Էդուարդից ամեն բանի համար և պաշտպանեց իր երկրի անկախությունը: Երբ Էդուարդը լսեց այդ մասին, նա միայն ամրապնդեց իր վճռականությունը՝ ենթարկեցնելու շոտլանդական պատերազմների դիմադրության այս վերջին հենարանը, բայց 1307 թվականին նա վախճանվեց՝ առանց իր կյանքի գործն ավարտին հասցնելու:

Թագավորի որդին՝ Էդուարդ II-ը, հոր ռազմական հմտություններից ոչինչ չժառանգեց: Էդուարդ I-ի օրոք կղզին անվտանգ էր: Նոր թագավորը Շոտլանդիայով մտահոգված չէր: Անգլիան անհամեմատ ավելի հարուստ էր, անգլիական բանակն ավելի լավ էր զինված, նրա զինվորները փորձառու էին, լավ կերակրված և լավ վարձատրվող: Իրոք, վերջին տարիներին նրանց վարած պատերազմները անգլիացի զինվորներին դարձրել էին, թերևս, Եվրոպայի ամենավտանգավոր և ամենահուժկու զինվորները: Ցանկացած պահի Էդուարդ II-ը կարող էր իր մեծաքանակ և լավ սպառազինված բանակը հանել շոտլանդացիների դեմ, որոնց պարզունակ զրահներն ու զենքերը չէին կարող մրցակցել անգլիացիների հետ: Թագավորը վստահ էր Ռոբերտ Բրյուսի նկատմամբ իր գերազանցության մեջ:

Էդուարդ Պլանտագենետի գահ բարձրանալուց մի քանի ամիս անց Բրյուսին հաջողվեց գրավել անգլիացիների կողմից պահվող մի քանի շոտլանդական ամրոցներ և այրել դրանք: Երբ թագավորը իր զորքերը ուղարկեց Բրյուսի դեմ, նա խուսափեց մարտից և իր փոքր բանակով ապաստան գտավ անտառում: Էդուարդը լրացուցիչ մարդիկ ուղարկեց Շոտլանդիայում մնացած ամրոցները ապահովելու և Բրյուսին պատժելու համար, բայց շուտով շոտլանդացի զինվորները սկսեցին անսպասելի ասպատակություններ իրականացնել Անգլիայի դեմ: Բարձր շարժունակությամբ շոտլանդական հեծելազորային ստորաբաժանումները, ինչպես իսկական ցամաքային ծովահեններ, անողոք կերպով ավերում էին Հյուսիսային Անգլիայի գյուղերը՝ ոչնչացնելով բերքն ու անասունները: Շոտլանդիայում մարտերը այժմ չափազանց թանկ էին դառնում անգլիացիների համար, և զորքերը հետ կանչվեցին, բայց մի քանի տարի անց Էդուարդը կրկին փորձեց:

Այս անգամ անգլիական բանակը բավականին խորը ներխուժեց, բայց կրկին հեծելազորային ստորաբաժանումները պատասխանեցին Անգլիայի վրա ասպատակություններով՝ հատելով հարավային սահմանը, ավերելով ֆերմաները և զրկելով անգլիացի գյուղացիներին ապաստանից ու բերքից: Նույնիսկ Շոտլանդիայում

Բրյուսի բանակը այրեց գյուղացիների դաշտերը՝ անգլիացի զավթիչներին զրկելու համար ցանկացած բանից, որից կարող էին շահույթ ստանալ: Ինչպես նախկինում, անգլիացիները ջանք չխնայեցին Բրյուսին հետապնդելու համար, բայց ապարդյուն: Նա շարունակեց խուսափել ուղղակի մարտերից: Անգլիացի զինվորները զիջեցին ժամերին անընդհատ լսում էին պարկապուկի և բարձրացող փողերի ձայներ, ինչը գերլարվածություն էր ստեղծում նրանց շրջանում: Քաղցած, հյուծված և անվերջ նյարդայնացած նրանք շուտով վերադարձան Հյուսիսային Անգլիա և ականատես եղան հակառակորդի կողմից իրենց հողերին հասցված վնասին: Անգլիացիները կորցրեցին իրենց ոգին: Ոչ ոք այլևս չէր ուզում կռվել Շոտլանդիայում: Աստիճանաբար, մեկը մյուսի հետևից, ամրոցները վերադարձվեցին իրենց նախկին տերերին՝ շոտլանդացիներին:

1314 թվականին շոտլանդացիները վերջապես հանդիպեցին անգլիացիներին Բենոքբուրնի ճակատամարտում և ջախջախեցին նրանց: Էդուարդ II-ի համար սա ամենախայտառակ պարտությունն էր, և նա երդվեց վրեժխնդիր լինել: 1322 թվականին Էդուարդը որոշեց, որ ժամանակն է մեկընդմիջտ վերջ տալ Բրյուսին արյունալի ճակատամարտում, որն արժանի կլինեիր իր հոր հիշատակին:

Հավաքելով և անձամբ ղեկավարելով ապստամբ շոտլանդացիների դեմ կռվող ամենամեծ բանակը՝ Էդուարդը գրավեց միայն Էդինբուրգի ամրոցը: Մի պահ նա կերպականներին ուղարկեց պարենամթերք ստանալու, բայց նրանք վերադարձան դատարկ սայլով, որին կապած էր միայն մեկ տկար ցուլիկ: Դիզենտերիան սկսեց ոչնչացնել անգլիացի զինվորներին: Էդուարդը ստիպված եղավ նահանջի հրաման տալ, բայց հասնելով Անգլիայի հյուսիսում գտնվող իր հողերին, հայտնաբերեց, որ շոտլանդացիները կրկին ներխուժել են և ավերել ամեն բան: Սովն ու հիվանդությունները սկսեցին ոչնչացնել ժամանակին հզոր բանակի մնացորդները: Արշավանքն այնքան աղետալի դարձավ, որ Էդուարդի զայրացած լորդերը ապստամբեցին: Նա փախավ, բայց գերի ընկավ և սպանվեց 1327 թվականին:

Հաջորդ տարի նրա որդին՝ Էդուարդ III-ը, հաշտություն կնքեց շոտլանդացիների հետ՝ Շոտլանդիային շնորհելով անկախություն և ճանաչելով Ռոբերտ Բրյուսին որպես օրինական թագավոր:

Մեկնաբանում

Անգլիացիները վստահ էին, որ կարող են անպատիժ ներխուժել Շոտլանդիա, երբ ցանկանան: Շոտլանդացիները վատ վիճակում էին և վատ էին զինված, և նրանց առաջնորդները անկարող էին միասնության հասնել: Տեսնելով այս ամենը ինչպե՞ս կարող էին անգլիացիները դիմամակայել այս հյուրավի կտորի զավթման գայթակղությանը: Փորձելով կանխել այն, ինչ թվում էր անխուսափելի, Ռոբերտ Բրյուսը մշակեց նորարարական ռազմավարություն: Երբ անգլիացիները հարձակվեցին, նա չներգրավվեց նրանց բաց մարտի մեջ: Այսպիսի մարտում նա անխուսափելիորեն կպարտվեր: Դրա փոխարեն նա նենգորեն, ցավոտ հարվածներ հասցրեց՝ անգլիացիներին պատճառելով նույն վնասը, ինչ նրանք պատճառում էին Շոտլանդիային, նույն կերպ ոչնչացնելով նրանց երկիրը: Նա շարունակեց շարժվել «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» մեթոդաբանության սկզբունքով մինչև անգլիացիները վերջապես հասկացան, որ Շոտլանդիայի վրա յուրաքանչյուր հարձակման համար նրանք ցավոտ և զգայուն հակահարված են ստանում: Անգլիացիների բերրի հողերը ավերվում էին, երկիրը աղքատանում, և իրենք ստիպված էին կռվել սարսափելի պայմաններում: Կամաց-կամաց անգլիացիների

ռազմատենչությունն ու նվաճման ծարավը մարեց, և նրանք, ի վերջո, հրաժարվեցին իրենց պահանջներից:

Սպառնալիքի ռազմավարության էությունն այն է, որ երբ ինչ-որ մեկը հարձակվում է ձեզ վրա կամ փորձում է վախեցնել ձեզ, հասկացրեք վիրավորողին, որ նա կտուժի դրա համար: Նրանք կարող են ավելի ուժեղ լինել, կարող են հաղթել մարտ առ մարտ, բայց յուրաքանչյուր հաղթանակ իր գինն ունի: Մի՛ բախվեք նման հակառակորդի հետ ուղղակիորեն: Փոխարենը վնասեք նրանց համար արժեքավոր մի բան, որը նրանց համար թանկ է: Սա նրանց կհասկացնի, որ ամեն անգամ, երբ նրանք ձեզ վնասում են, պետք է հիշեն, որ կլրեն պատասխան վնաս, անկախ նրանից, թե որքան փոքր է այն: Այս նյարդայնացնող և ուժասպառ հարձակումները դադարեցնելու միակ միջոցը պարզ է՝ պետք է դադարեցնել ձեզ վրա հարձակումը: Սա ձեր մաշկի վրա նստած իշամեղվի ռազմավարությունն է. մարդկանց մեծ մասը փորձում է չանհանգստացնել կամ չգրգռել իշամեղուներին:

3. Մի օր Լյուդովիկոս XI-ը (1423–1483)՝ ֆրանսիացի անբարոյական միապետը՝ Սարդ Արքան, ում մականունը տրվել էր իր թշնամիների դեմ անընդհատ խորամանկ խարդավանքների և դավադրությունների համար, հանկարծակի երկար, զայրացած տրիադ սկսեց Միլանի դքսի դեմ: 1474 թվականի այդ հունվարյան առավոտյան Լյուդովիկոսի հետ պատահաբար գտնվող պալատականները ցնցված լսում էին, թե ինչպես է թագավորը՝ սովորաբար այդքան զուսպ և զգույշ իր բառերի ընտրության մեջ, ազատորեն կիսվում իր կասկածներով: Չնայած դուքսի հայրը նրա ընկերն էր, թագավորն ասաց, որ իր որդուն չի կարելի վստահել: Նա ակնհայտորեն գործում էր Ֆրանսիայի դեմ՝ փորձելով խաթարել երկրների միջև խաղաղ հարաբերությունները: Լյուդովիկոսը շարունակեց. «Ինչ-որ բան պետք է արվի դավաճան դքսին կանգնեցնելու համար: Նրան պետք է պատշաճ դաս տալ»: Անսպասելիորեն, պալատական փողփողացող շփոթության մեջ, ներկաներից մեկը մեղմորեն դուրս սահեց թագավորական ննջարանից:

Դա Քրիստոֆորո դա Բոլատին էր՝ միլանցի դեսպանը Ֆրանսիայում: Այդ առավոտյան Բոլատին թագավորի կողմից բավականին բարեհաճորեն էր ընդունվել, որից հետո հեռացել էր և մնացել էր հետևում, այնպես որ Լյուդովիկոսը, ըստ երևույթին, մոռացել էր նրա մասին: Թագավորի սարսափելի սխալը կարող էր դիվանագիտական սկանդալի հանգեցնել:

Այդ օրը ավելի ուշ Լյուդովիկոսը Բոլատինին հրավիրեց իր ննջարան, որտեղ, անկողնում պառկած, սկսեց անփույթ, նույնիսկ անլուրջ զրույց վարել: Ինչ-որ պահի զրույցը սահուն կերպով տեղափոխվեց քաղաքական հարցերի քննարկման ոլորտ: Թագավորը խոստովանեց, որ համակրանք ունի Միլանի դքսի նկատմամբ և պատրաստ էր ամեն ինչ անել՝ նրան իշխանությունը ընդլայնելու: Ապա նա հարցրեց. «Ասա ինձ, Քրիստոֆորո, դու տեղեկացված էիր, այնպես չէ՞, այսօրվա դքսի դեմ իմ բողոքների մասին: Անկեղծ ասած, արքունիքում ինչ-որ մեկը քեզ ասել է, այնպես չէ՞»: Բոլատին խոստովանեց, որ ներկա է եղել թագավորի ննջասենյակում, երբ նա արտասանել է իր տրիադը, և ամեն ինչ լսել է իր ականջներով: Նա նաև օգտվեց առիթից՝ արտահայտելու իր անհամաձայնությունը թագավորի հետ՝ պնդելով, որ Միլանի դուքսը Նորին Մեծության նվիրված ընկերն է: Լյուդովիկոսը պատասխանեց, որ ինքը պատճառ ունի զայրանալու դքսի վրա և կասկածելու նրա հավատարմության մեջ, բայց հետո փոխեց թեման՝ խոսելով հաճելի մանրությունների մասին, և Բոլատին շուտով հեռացավ: Հաջորդ օրը թագավորը երեք խորհրդական ուղարկեց Բոլատինին

այցելելու: Արդյո՞ք նա հարմարավետորեն տեղավորվեց Փարիզում: Արդյո՞ք նա գոհ էր թագավորի վերաբերմունքից: Ի՞նչ բարելավումներ կարելի էր անել, որպեսզի նրա մնալը ֆրանսիական արքունիքում ավելի հարմարավետ և հաճելի լիներ: Նրանք նաև ցանկանում էին իմանալ, թե արդյոք նա մտադիր է թագավորի խոսքերը փոխանցել դքսին: Խորհրդականների խոսքով՝ թագավորը Բոլլատիին համարում էր վստահելի ընկեր, վստահելի անձ, և այդ պատճառով էլ նա իր զգացմունքները բացել էր նրա ներկայությամբ: Դրան չպետք է կարևորություն տրվի: Հարկ է որպեսզի Բոլլատին մոռանար այդ ամենը:

Այս մարդկանցից ոչ մեկը՝ ո՛չ խորհրդականները, ո՛չ պալատականները, ո՛չ էլ Բոլլատին, չգիտեին, որ թագավորը այս ամենը արել էր որոշակի միտումով: Լյուդովիկոսը կասկած չուներ, որ դավաճան դեսպանը, որին նա, իհարկե, ընկեր չէր համարում, առավել ևս՝ վստահելի անձ, դուքսին կփոխանցի ասվածի յուրաքանչյուր մանրամասնություն: Նա գիտեր, որ դուքսը որպես դաշնակից անվստահելի է, և ուզում էր համոզվել, որ սարսափելի նախագգուշացումը կհասնի իրեն: Թվում է, թե նա իր ուզածին հասավ: Հաջորդ տարիներին Միլանի դուքսը վարվեց որպես հնազանդ և հարմարվողական դաշնակից:

Մեկնաբանում

Սարդ-թագավորը հեռատես մարդ էր, ով խորհում և պլանավորում էր իր գործողությունները բազմաթիվ քայլերից առաջ: Այս դեպքում նա հասկանում էր, որ եթե քաղաքավարի խոսեր Միլանի դեսպանի հետ՝ մնալով դիվանագիտության շրջանակներում, ապա նրա նախագգուշացումներն ու հորդորները համոզիչ չէին լինի՝ պարզապես անգոր ողբեր ու բողոքներ: Մյուս կողմից, եթե թագավորը բացահայտորեն արտահայտեր իր գայրույթն ու վրդովմունքը դեսպանին, կթվար, թե նա կորցնում է վերահսկողությունը: Ավելին, ուղղակի հարձակմանը հեշտությամբ կարելի էր հակադդել: Դուքսը կպայթեր կեղծ խոստումներով՝ շարունակելով իր դավաճանական գործունեությունը: Իր սպառնալիքները խորամանկ խուսափողական մանևրի միջոցով փոխանցելով՝ Լյուդովիկոսը ապահովեց, որ դրանք ունենան իրենց ազդեցությունը: Թագավորի կողմից իր դժգոհությունը դուքսից թաքցնելը ցույց էր տալիս, որ նա իսկապես գայրացած էր, և իրավիճակը դքսի համար ներկայացվում էր որպես չարագուշակ և սպառնալից: Ամեն ինչ ցույց էր տալիս, որ թագավորը ինչ-որ բան կասկածում էր, և որ դքսի իրական զգացմունքները նրա համար գաղտնիք չէին: Սպառնալիքը դքսին փոխանցվել էր նրան մտածելու, անհանգստանալու և վախենալու մտադրությամբ:

Երբ մենք հարձակման ենք ենթարկվում, միշտ գայթակղվում ենք տրվել հույզերին, ուղղակիորեն դիմել բռնարարներին՝ պահանջելով դադարեցնել հարձակումները և վախեցնել նրանց այն բաներով, որոնք մենք կանենք, եթե նրանք հետ չկանգնեն: Սակայն սա մեզ թույլ դիրքում է պահում: Մենք միաժամանակ բացահայտում ենք մեր վախերը և մեր ծրագրերը, և բառերը հազվադեպ են վախեցնում ագրեսորներին: Շատ ավելի արդյունավետ մոտեցում է միջնորդի միջոցով քողարկված ուղերձ փոխանցելը կամ, կարծես թե պատահաբար, ձեր մտադրությունները բացահայտելը: Սա նրանց կհասկացնի, որ դուք արդեն գաղտնի աշխատում եք նրանց դեմ: Մի՛ քաշեք վարագույրը ամբողջությամբ: Եթե նրանք կարողանան կռահել ձեր ծրագրերի միայն մի մասը, նրանց երևակայությունը կլրացնի մնացածը: Թող նրանք տեսնեն, որ դուք ինչ-որ բան եք ծրագրում, որ դուք ունակ եք մշակել ծրագրեր և ռազմավարություններ, և դա ձեր հակառակորդներին

կզգուշացնի ձեզ վրա հարձակվելուց կամ վնասելուց առաջ: Նրանք ռիսկի դիմելու կարիք չունեն: Նրանք նախ պետք է պարզեն ձեր մտադրությունները:

4. 1950-ականների սկզբին Ջոն Բոյդը (1927–1997) ծառայել է որպես կործանիչ օդաչու Հյուսիսային Կորեայում և այժմ էլ ընկել իր հաջողություններով: 1950-ականների կեսերին նա դարձել էր Նևադա նահանգի Նելիս քաղաքում գտնվող ԱՄՆ ռազմաօդային բազայի լավագույն և ամենահարգված հրահանգիչ օդաչուներից մեկը: Նրա օդային մարտական պատրաստության հմտությունները անգերազանցելի էին, ուստի նրան խնդրեցին գրել օդային մարտական մարտավարության վերաբերյալ կործանիչ օդաչուների մեթոդական ուղեցույց: Նա մշակեց յուրահատուկ ոճ, որը հուսահատեցնում և ահաբեկում էր թշնամուն՝ շեղելով նրանց ուշադրությունը և խանգարելով կենտրոնանալուն: Բոյդը խելացի և անվախ էր: Սակայն նրա բոլոր հմտություններն ու կարողությունները, նրա ողջ ռազմական քաջությունը, ինչպես նաև այն փաստը, որ նա պատերազմում բազմիցս անգամ սիրախաղում էր մահվան հետ, սկզբում նրան չօգնեցին Պենտագոնի անդրկուլիսյան պատերազմի անարյուն մենամարտերում և քաղաքական մանևրներում, որոնց մեջ նա ներքաշվեց 1966 թվականին՝ թեթև կործանիչ ինքնաթիռների մարտավարության մշակմանը նպաստելու գործում:

Ինչպես գրեթե անմիջապես նկատեց մայոր Բոյդը, Պենտագոնի բյուրոկրատները շատ ավելի մտահոգված էին իրենց կարիերայով, քան պետության շահերով: Նրանց հիմնական մտահոգությունը լավագույն կործանիչի դիզայնի ներդրումը չէր, այլ ծանոթ կապալառուից պատվերներ ստանալը՝ նոր սարքավորումներ գնելով անկախ նրանից, թե դրանք անհրաժեշտ էին նախագծի համար, թե ոչ: Որպես ռազմական օդաչու՝ Բոյդը մարզվել էր յուրաքանչյուր իրավիճակ դիտարկել որպես ռազմավարական մարտ: Այժմ, հայտնվելով Պենտագոնի ջունգլիներում, նա որոշեց կիրառել իր գիտելիքներն ու մարտական ոճը: Նա պետք է խաբեր թշնամուն, հուսահատեցներ նրան և խաթարեր նրա վստահությունը:

Բոյդը խորապես համոզված էր, որ իր մշակած թեթև կործանիչը կարող է հեշտությամբ գերազանցել աշխարհի ցանկացած ինքնաթիռի: Սակայն կապալառուները խիստ տպավորված չէին նրա նախագծով: Այն չափազանց էժան էր և չէր ներառում այն առաջադեմ, թանկարժեք տեխնոլոգիական առաջընթացները, որոնք նրանք որոշել էին առաջադրել: Ավելին, Բոյդի մրցակիցները Պենտագոնում ունեին իրենց սեփական նախագծերը: Ցանկանալով գողանալ գլխավոր մրցանակը՝ նրանք ամեն ինչ արեցին Բոյդի նախագիծը խափանելու կամ, առնվազն, այն անճանաչելիորեն վերամշակելու համար:

Բոյդը սկսեց ամրապնդել իր պաշտպանությունը: Արտաքուստ նա նման էր անմիտ զինվորի: Նա կրում էր լայն կոստյումներ, ծխում էր էժան սիգարներ և միշտ շուրջը նայում էր շփոթված հայացքով: Բոյդը նման էր կոպիտ անտառապահի, զինվորականի, որը պատահաբար ստացել էր պաշտոնի բարձրացում: Մինչդեռ, լուռ, առանց ուշադրություն գրավելու, ուսումնասիրում էր ամեն ինչ մինչև վերջին մանրուքը: Այժմ, անկասկած, նա իրավիճակին ավելի լավ էր տիրապետում, քան իր մրցակիցները: Բոյդը կարող էր անգիր արտասանել ցանկացած վիճակագրական տվյալ, անգիր սովորել գիտական հոդվածներն ու ինժեներական տեսությունները, որոնք հիմնավորում էին իր նախագիծը, և բացահայտել իր հակառակորդների նախագծերի լուրջ թերությունները: Կապալառուները հանդիպումներին ներկայանում էին առաջատար ինժեներների կողմից պատրաստված շլացուցիչ, նրբագեղ

ներկայացումներով՝ տալով ֆանտաստիկ խոստումներ, որոնք գեներալների գլուխները պտտեցնում էին: Բոյդը քաղաքավարի լսում էր. նա, թվում էր թե, նույնպես տպավորված էր, և ապա հանկարծ, առանց պատերազմ հայտարարելու, անցնում էր հարձակման՝ մանրամասն քանդելով նախագծերը, հերքելով նրանց ոգևորված պնդումները և հստակ ցույց էր տալիս, որ հաշվարկները սխալ էին և ոչինչ չէին նշանակում, բացի կեղծիքից, ծխից և հայելիներից: Որքան ընդդիմադիրները բողոքում էին, այնքան ավելի դաժան էր դառնում Բոյդի քննադատությունը, քանի որ նա աստիճանաբար ջախջախում էր իր մրցակիցների նախագծերը:

Անսպասելի հարված ստանալով այն մարդուց, որին այդքան ողբերգականորեն թերագնահատել էին, կապալառուները հանդիպումից հեռացան վրեժխնդրության ծարավից այրվելով: Բայց ի՞նչ կարող էին անել նրանք: Ի վերջո, նրանք արդեն պարպել էին իրենց լիցքերը, և նրանց նախագծերը քանդվել էին: Հանցագործության վայրում բռնվելով՝ նրանք կորցրեցին հեղինակությունը: Այլևս ոչինչ չէր մնում անելու, քան ընդունել պարտությունը: Նրանք շուտով հասկացան, որ պետք է ընդհանրապես խուսափեն Բոյդից: Նրանք նույնիսկ չփորձեցին խափանել նրա նախագիծը՝ համոզված լինելով, որ այն կձախողվի առանց իրենց օգնության:

1974 թվականին Բոյդը իր գլխավորած թիմով ավարտեց իրենց ինքնաթիռի նախագծումը և, կարծես, վստահ էր, որ այն կհաստատվի: Սակայն Բոյդի ռազմավարության մի մասն էր Պենտագոնի տարբեր բաժիններում և ստորաբաժանումներում դաշնակիցների ցանց ստեղծել: Հենց այդ մարդկանցից էլ լուր ստացվեց, որ բարձրաստիճան գեներալների մի խումբ կտրականապես դեմ է Բոյդի նախագծին և մտադիր է ապահովել դրա ձախողումը: Նրանց ծրագիրն էր նախ այն փոխանցել հրամանատարական շղթայով՝ կազմակերպելով հանդիպումներ աննշան դեմքերի հետ, որոնք կընդունեին դրական որոշումներ, ապա՝ բարձրագույն ղեկավարության՝ նույն այդ գեներալների մասնակցությամբ եզրափակիչ հանդիպման ժամանակ նրանք պլանավորում էին չեղարկել նախագիծը: Սակայն, հաշվի առնելով նախորդ բոլոր դրական արձագանքները, թվում էր, թե նախագիծը ենթարկվել է լիովին արդար և անաչառ վերանայման: Այս կողմնակիցների ցանցից բացի, Բոյդը ձգտում էր ապահովել Պենտագոնի առնվազն մեկ այլ ազդեցիկ դեմքի զգալի աջակցությունը:

Նման դաշնակից գտնելը դժվար չէր: Պենտագոնում, ինչպես ցանկացած նմանատիպ կառույցում, միշտ կգտնվեին համակարգից դժգոհ ղեկավարներ կամ ազդեցիկ պաշտոնյաներ, ովքեր ուրախ կլինեին դառնալ Բոյդի նման նախագծի գաղտնի հովանավորը:

Այս անգամ Բոյդը կապվեց իր ամենաազդեցիկ հովանավորի՝ պաշտպանության նախարար Ջեյմս Շլեզինգերի հետ և ստացավ Շլեզինգերի անձնական համաձայնությունը նախագծի վերաբերյալ: Այնուհետև, գեներալների հետ հանդիպման ժամանակ, ովքեր արդեն գաղտնի տոնում էին հաղթանակը, Բոյդը հայտարարեց. «Պարոնայք, ես լիազորված եմ պաշտպանության նախարարի կողմից ձեզ տեղեկացնել, որ այս հանդիպումը չի անցկացվում տվյալ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու համար: Այս հանդիպման նպատակը պարզապես նախագծին ծանոթանալն է»: Բոյդը շարունակեց, որ նախագիծն արդեն հաստատված է: Այնուհետև նա անցավ նախագծի իրական ներկայացմանը, իր զեկույցը դարձնելով երկար և մանրամասն՝ անհնարինության աստիճանի: Սա նրա ձևն էր իր հակառակորդների վերջ տալու համար: Բոյդը ցանկանում էր, որ նրանք իրենց նվաստացած զգան, որպեսզի այլևս երբեք չցանկանան շփվել իր հետ:

Բոյոլը՝ փորձառու ռազմական օդաչուն, սովոր էր օդային մարտերը մի քանի քայլ առաջ հաշվարկելու՝ առաջ անցնելով հակառակորդից, ապա շեղվելով նրանց վտանգավոր ու սարսափելի մանևրով: Նա այս ռազմավարությունը կիրառեց նաև բյուրոկրատական պատերազմում: Երբ գեներալը նրան հրաման տվեց, որը հստակ ուղղված էր նրա ծրագրերին հակադդեմ, Բոյոլը ժպտաց, գլխով արեց և ասաց. «Պարոն, ես սիրով կկատարեմ այդ հրամանը: Բայց միայն այն դեպքում, եթե այն գրավոր լինի»: Գեներալները, իհարկե, նախընտրում էին հրամաններ տալ բանավոր, քանի որ գրավոր փաստաթղթերը կարող էին վկայել անօրինական գործողությունների մասին: Անսպասելիորեն բարձրաստիճան սպան ստիպված էր կամ չեղյալ համարել հրամանը, կամ հրաժարվել այն թղթի վրա գրելուց, քանի որ դա կարող էր նրան չափազանց անբարենպաստ լույսի ներքո ներկայացնել: Երկու դեպքում էլ հրամանը մնաց չկատարված՝ դա ծուղակ էր:

Բոյոլի հետ մի քանի տարի աշխատելուց հետո Պենտագոնի գեներալներն ու նրանց ենթակաները սկսեցին խուսափել նրանից: Նրանք վախենում էին Բոյոլից կրակի պես, նրա անպարկեշտ սիգարներից, անգրագետ խոսքից և խորամանկ ու վտանգավոր պոթեկումներից: Նման համբավ ձեռք բերելով՝ Բոյոլը կարողացավ ապահովել, որպեսզի F-15 և F-16 կործանիչների նախագծերը անցնեն Պենտագոնի բոլոր մակարդակները (գրեթե անհավանական սխրանք), և նրա ջանքերի հաջողության արդյունքում Ռազմաօդային ուժերը ձեռք բերեցին երկու հայտնի ու չափազանց արդյունավետ ինքնաթիռների մոդելներ:

Մեկնաբանում

Բոյոլը արագ հասկացավ, որ իր նախագիծը Պենտագոնում լավ ընդունելության չի արժանանում, և որ շատերը կխանգարեն իրեն՝ թույլ չտալով հասնել իր նպատակներին: Եթե նա սկսեր պայքարել բոլորի դեմ՝ կապալառուների կամ գեներալների, նա արագ կհյուծվեր և կզլորվեր՝ ընկնելով կրակի մեջ: Սակայն Ջոն Բոյոլը պարզվեց, որ սովորական զինվոր չէ, այլ բարձրակարգ ռազմավար: Ի դեպ, նա հետագայում նշանակալի դեր խաղաց «Փոթորիկ անապատում» պլանի մշակման գործում: Ռազմավարը երբեք չի հակադրի կոպիտ ուժը ուժի դեմ: Նա կանի այլ կերպ՝ ձգտելով բացահայտել թշնամու թույլ կողմերը: Եվ Պենտագոնի բյուրոկրատիան, ինչպես ցանկացած նմանատիպ համակարգ, ունի բազմաթիվ թույլ կողմեր, և Բոյոլը գիտեր, թե ինչպես դրանք նույնականացնել:

Պենտագոնում Բոյոլին հանդիպած անձինք անհամբեր սպասում էին հարմարվելուն ու հաճոյանալուն: Նրանք մարտավարներ էին, խորամանկ մարդիկ, որոնք զբաղված էին իրենց հեղինակությամբ: Մեկ այլ առանձնահատկություն էր նրանց անընդհատ զբաղվածությունը, նրանք ժամանակ չունեին մանրութների համար: Բոյոլի ռազմավարությունը պարզ էր: Նա ձեռք էր բերել դժվար, կռվարար, նույնիսկ կոպիտ լինելու համբավ: Մարդիկ վախենում էին նրա հետ գործ ունենալ: Դա նշանակում էր տգեղ վեճեր վկանների ներկայությամբ, որը ոչ միայն ժամանակի վատնում էր, այլև կարող էր բացասաբար անդրադառնալ նրանց կարիերայի վրա և վատթարացնել նրանց վիճակը: Ըստ էության, Բոյոլը իրեն նմանեցնում էր վայրենակերպի (дикообраз): Ոչ մի կենդանի չէր համարձակվի հարձակվել այս փշոտ գազանի վրա, որը, չնայած փոքր չափերի, կարող է լուրջ վնասներ պատճառել: Նույնիսկ խոշոր գիշատիչները խուսափում էին նրանից: Բոյոլի անարգել կարգավիճակը նրան ազատություն էր տալիս մանևրելու, թույլ տալով նրան

գոյատևել անբարենպաստ պայմաններում և դիմանալ բավականաչափ երկար, որպեսզի հաջողությամբ ավարտեր F-15 և F-16 նախագծերը:

Հեղինակությունն իսկապես շատ կարևոր է: Բոլոր հասկանում էր սա: Ձեր սեփական հեղինակությունը կարող է այնքան էլ հզոր չլինել, որքան նրանք, չէ՞ որ մենք բոլորս էլ ժամանակ առ ժամանակ ստիպված ենք քաղաքական խաղեր խաղալ՝ ձևանալով բարի և հարմարվողական: Շատ դեպքերում սա արդարացնում է իրեն, բայց դժվարին կամ վտանգավոր պահերին հեղինակությունը կարող է աշխատել ձեր դեմ: Այն ցույց է տալիս, որ ձեզ կարող են հարվածել, մի կողմ մղել, շփոթեցնել կամ պարզապես անպատիժ մնալ ստվերում:

Եթե նման իրավիճակներում չհակազդեք, ապա սպառնալից խոսքերը հավատ չեն ներշնչի: Հասկացեք. կարևոր է շրջապատի մարդկանց հստակեցնել, որ անհրաժեշտության դեպքում ձեր ամբողջ հաճելիությունն ու քաղաքավարությունը կվերանա, և դուք կդառնաք անզիջող ու տհաճ մարդ, ով կարող է պաշտպանել իր տեսակետները: Մի քանի հաստատումներ բավարար կլինեն, բայց դրանք պետք է լինեն միանշանակ և բավականաչափ համոզիչ: Երբ ուրիշները ձեզ տեսնում են որպես մարտիկ, նրանց սրտերը կմտնեն թեթևակի անհանգստություն: Եվ, ինչպես ասել է Մաքիավելին, շատ ավելի օգտակար է վախենալ, քան սիրված լինել:

ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԾԻՔ

Երբ հակառակորդը չի ցանկանում մարտի բռնվել ձեզ հետ, պատճառն այն է, որ նա կարծում է, որ դա իրեն ձեռնտու չէ, կամ որ դուք խաբել եք նրան այդպես մտածելու համար:

Սուն Յզի (մ. թ. ա. IV դ.)

ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ

Սպառնալիքի ռազմավարության նպատակն է հակառակորդին հետ պահել հարձակումից, և սովորաբար դրան հասնում են վախեցնող տեսքով կամ գործողությամբ: Սակայն որոշ իրավիճակներում ավելի լավ է նույն նպատակին հասնել ավելի անվտանգ միջոցներով՝ պարզամիտ և համեստ թվալով: Եթե դուք ձեր հակառակորդների աչքում անվնաս կամ արդեն պարտված եք թվում, նրանք կարող են ձեզ հանգիստ թողնել: Անմեղ դեմքը կօգնի ձեզ ժամանակ շահել և ուժ հավաքել: Այդպես էր Կլավդիոսը, նախքան կայսր դառնալը, կարողացել այդքան երկար գոյատևել հռոմեական քաղաքականության վտանգավոր և նողկալի աշխարհում: Նա չափազանց անվնաս էր թվում, որպեսզի խճճվեր դրա մեջ: Այս ռազմավարությունը, պետք է նշել, պահանջում է մեծ համբերություն և լի է որոշակի ռիսկով: Դուք դիտավորյալ խաղում եք գառի դեր գայլերի ոհմակում:

Ամեն դեպքում, ձեր կողմից սպառնալիքի կիրառումը պետք է խստորեն վերահսկվի: Չափազանց զգույշ եղեք, որ չտարվեք, որպեսզի չարբենաք սպառնալիքի բերած ուժի քաղցր թույնով: Օգտագործեք այն միայն որպես պաշտպանություն, եթե վտանգի մեջ եք, այլ ոչ թե հարձակման համար, երբ ցանկանաք: Կարևոր է հասկանալ, որ մշտական սպառնալիքը վախեցած մարդկանց վերածում է թշնամիների, և եթե չկարողանաք վերականգնել ձեր նախկին բարի անունը արդար

հաղթանակների միջոցով, կկորցնեք նրանց վստահությունը: Ավելին, եթե դուք այնքան հրահրեք ձեր թշնամուն, որ նա որոշի նույն կերպ հակահարված տալ, հակամարտությունը կարող է վերածվել լուրջ պատերազմի, և չկա որևէ երաշխիք, որ դուք հաղթանակ կտոնեք: Այս ռազմավարությունը պետք է օգտագործվի զգուշությամբ:

Սկիզբը.

- 1) https://www.datocms-assets.com/63284/1732378406-first-strategy_arm.pdf
- 2) https://www.datocms-assets.com/63284/1735414231-last-wars_arm.pdf
- 3) https://www.datocms-assets.com/63284/1740855330-keep-ur-head_arm.pdf
- 4) https://www.datocms-assets.com/63284/1744480072-drive-into-desperate_arm.pdf
- 5) https://www.datocms-assets.com/63284/1747510579-avoid-traps_arm.pdf
- 6) https://www.datocms-assets.com/63284/1751140077-divide-forces_arm.pdf
- 7) https://www.datocms-assets.com/63284/1754762031-crusade-war_arm.pdf
- 8) https://www.datocms-assets.com/63284/1759605001-force-estimate_arm.pdf
- 9)

Աղբյուրը. <https://www.litres.ru/book/robert-grin/33-strategii-voyny-624835/chi>